

նաւոր և լաւագոյն երանակներէ հետ և կը ցոյց տան գանազան ուսման օժանդակող պարագաների գործադրութիւնը: Ժողովը կայանալուց առաջ պ. Բարխուդարեանցը կը կազմէ թիֆլիսում մի կարգադրող մասնաժողով՝ հոգալու ընդհանուր ժողովի բոլոր հարկաւորութիւնները (աշակերտներ, պարապմունց տեղ, օժանդակող միջոցներ և գանազան գործիքներ, գանազան հիմնարկութիւններ—գեղանոցի, ակլիմատաջրական այգիի, փոխառու-խնայողական ընկերութեան վարչութիւններէ հետ յարաբերութիւն մասնաւոր և այլն): Մենք կաշխատենք ծանօթացնելու ընթերցողներին վերջիշեալ ծրագրի ամբողջութեան հետ և մտադիր ենք մինչև ժողով կայանալու ծրագրի խնդիրները լրագրի միջոցով մեր միջոցներէ չափ վիճարանութեան նիւթ դարձնելու. առ այժմ մարտի 1-ով ապագայ ուսուցչական ժողովին աջողութիւն, և ցանկանալով գործ աշխատողներին համրութիւն գանազան խաչընդունելի դէմ, մենք միանգամայն ձայնակից ենք «Մշակ» անցնալ համարներէ մէկի մէջ առաջարկված կարծիքին, թէ լաւ կը լինէր, որ այդ ժողովին մասնակցէին մեր պարսկահայ և ասովհայ կողմերէնը: Այս խնդրի վրա վաղորօք պէտք է հոգան պարսկահայ ուսումնարաններէ վարչութիւնները և ճանկաստանի Միացեալ ընկերութիւնը և իր ժամանակին պէտք է ուղարկեն թիֆլիս մի քանի ներկայացուցիչներ, որոնք նոյնպէս կարողանային տանել իրանց հետ թարմ պաշար առողջ մանկապարտէզական և երջանակաւոր ժողովներ կայանալու լուսաւորեալ երկիրներում գործակերտով և օվայիներով են ընդունվում, և թիֆլիսը, որ պատիւ պիտի համարի առաջին անգամ այդ տեսակ ժողով տեսնելու, չը պէտք է իր ընդունելութիւնը եզրապակեան մտախնայելի կերպարանքով կատարէ:

պէս Ամատունին արգելեց զերասաններին մատակարար Աստղիկի ներկայացմանը, որի պատճառով Աստղիկը ստիպված էր մնալ թիֆլիսում ամբողջ աւելի և նորից պարտերի վրա պարտեր աւելացնել, մինչև որ ես Ազուլիսից թիֆլիս գամ և իմ ու սիրողներէ մասնակցութեամբ ներկայացում տայ (յայտնի է, որ գերատաններէ պատճառով Աստղիկը չը կարողացաւ մի ամբողջ պիեսա տալ այլ ստիպված երաժշտական մի երկերի տուեց, երկու ջոկ ջոկ պիեսաների մի մի գործողութեանց հետ) հէնց այդ մարդը, պ. Մատինեանցը, որ առաջինը ինքն էր միս գերատաններին հաղորդողը Ամատունու կամը և ինձ ասում էր ամեն հանդիպելու. «Այս անիմոս, էլի չեմ կարողանալու գլուխ բերել, դու անպատճառ փող կը լինիս ստացած, Մաքրազ, գոնէ մի 100 ռուբլ և ճանապարհի ծախս»: Ասում ես, այժմ հէնց այդ մարդն է հանդէս եկել և ստույթները իր զէնք առած, գրախօսութիւնները իր քնն փաստ վերցրած լցնում է «Մեղութիւն» էջերով: Մի ասող լինի թէ նա գերատանն է և Աստղիկը կարիք էլ չունէր նրան դիմելու, ուրեմն ինչն էր նրան ստիպել հանդէս դուրս գալու գերատաններէ կողմից—Ամինքին յայտնի է, որ նախ ներկայացման համար հարկաւոր են գերատաններ և յետ այնորիկ յուշարար. բանի որ գերատաններէ մերժումն է ստանում, ուրեմն էլ ինչու պէտք է Աստղիկը անպատճառ Մատինեանցին դիմել, մինչդեռ Մատինեանցի յուշարարութեանը հարկաւորութիւն էլ չէր տեսնուց:

Արդէս զի իմ ասածները չերկարեն, ես այստեղ փաստեր և իրողութիւններ կը բերեմ, որոնց յետոյ ընթերցողը պարզ կարող է անել իր եզրակացութիւնը, թէ Մատինեանցի գրուածքից որ աստիճանի ազնւութիւն է փչուած: Աստղիկը խնդրել է Ազուլիսին, Մատինեանցին, Տէր-Կաթինեանցին, Ազուլիսին, Մատինեանցին և Վարդապետին: Սրանք երբ մերժել են, յայտնելով պատճառները, Աստղիկը միս գերատաններին էլ չէ դիմել և սա ի հարկէ պարզ է. որովհետեւ միանկերից էլ բացասական պատասխան պիտի ստանար: Բայց շարունակեմ իմ և Հովհաննիսի մի քանի ուրիշ պարունակներ մտ Մատինեանցը պիտի տրուէր հաւատարմութիւն թէ ինչն անը ասել է Չմէլի անցին. որ գերատաններէ երբ չը մասնակցեն Աստղիկի ներկայացմանը, հակառակ դիպուածում զաւրոյ ներկայացումն են երբ նրանք էլ իմ մտքով չեն լինի, սուտի և գերատանները ստիպված էին չը մասնակցել: Ազուլիսը չը ինձ ասաց Մատինեանցին. «Ինչն անը հրամայել է, որ չը մասնակցեմ Աստղիկի ներկայացմանը, եթէ ոչ մեծ սիրով կը ցանկանայի մասնակցել»:

Աստղիկի ներկայացումից յետոյ Վարդապետին, Տէր-Կաթինեանցը և Ազուլիսը իրանք խոտուականցին, երբ ես նրանց յանդիմանում էի թէ ինչու չը մասնակցեցին, որ թէ և Աստղիկը չառ խնդրել է. բայց չեն կարողացել մասնակցել. պատճառ, Ամատունին արգելել է: Իմ հետաքրքրութեանը թէ ինչն անը ասում էր նրանց ասել, պատասխան տուցայ Ազուլիսին և Վարդապետին:

հուց որ Մատինեանցն է նրանց հաղորդել: Կարող եմ Մատինեանցը երևում է, որ յուշարարի պաշտօնը վատ չէ հակադրել: Այս այնպիսի փաստեր են, որ թիֆլիսի թատրոնով հետաքրքրվող ողջ հասարակութիւնը գիտէ: Ես ինքս անձամբ գնացի Ամատունուց խնդրեցի Պալմի թատրոնը: Կուցեց ասող լինի ինչու էր Պալմի թատրոնը Ամատունուց խնդրում.— որովհետեւ Պալմի ինձ ասաց, որ հայոց ներկայացումներին համար մինչև իշխան Ամատունուց պաշտօնապէս իրաւունք չը տրուի, չեմ կարող ոչ ոքի տալ: Ինձ մերժեց, երբ իմացաւ որ Աստղիկի համար եմ ուզում և աւելացրեց. «Ինչու է ուզում անպատճառ ներկայացում տայ, աւելի լաւ չէ 300 ռուբլի են տալիս ասնէ և գնայ առանց ներկայացում տալու»: Մի ուրիշ որ էլ ինչն անը մատունին ինձ պատահեց Մատինեանցի և Ազուլիսից հետ, այսպէս խօսեց. «Մաքրապետն ինձանից ներկայացած կը լինի, որ թատրոնը չը ստուցի»: Իմ պատասխանը եղաւ, «այդպիսի գործակալ լսաների համար չեմ ներկայաց»: Բողոքովն սուտ է թէ անցեալ տարի Մատինեանցի բնեֆիսին, որ Վարդապետին կհոջ ասն-ձամբարմն» էր, Աստղիկը նոր գեր չը ստիպեց և այս պատճառով որդէս թէ չը խաղացվեց այս պիեսան: Այս նախ որ այդ պիեսան փոփոքեց Ամատունու կարգադրութեամբ, որովհետեւ աղայոց գերերի յարմար գերատաններ չունէին (այն ժամանակ Ազուլիսն բեմից դուրս էր) և պիեսայի անսովոր շատ թույլ էր, իսկ երկրորդ ժողովը գեր Մատինեանցին էր սուտ և ոչ Աստղիկին, և որի ստիպելը կամ չը ստիպելը պիեսայի փոփոխելու պատճառ երբեք կգամ չէր ինչպէս որ գիտեմ, Մատինեանցը և Աստղիկը— Մատինեանցի ասելով, միասին չը կամեցան մասնակցել երկրորդական գերեր կատարող գերատաններին բնեֆիսին, ուրեմն ինչն էր պատճառը, որ Մատինեանցը մասնակցեցին, Աստղիկը կհոջ ոչ: Պէտք է նկատած, անցեալ տարի ինչն իշխան Ամատունին էր արգելել Մատինեանցին և Աստղիկին, որ չը մասնակցեն երկր գեր կատարող գերատաններին բնեֆիսին: Թող ինքը իշխանը խօսէ այդ մասին որ երբ մի որս տեսակեալ կունենար այդ բանում, մինչև անգամ պատիրել էր, որ մինչև սեպտեմբեր ամիսը բողոքովն բեմ չը դուրս գան: Վերջապէս միջեւ կոմիտայի այդ արարքները նոր բաներ են, միջեւ անցեալ թատրոնի առաջին տարին Տէր-Կաթինեանցին չարգելեց խաղալ Արծ. թատրոնում սիրողների ներկայացմանը (այդ ժամանակ Տէր-Կաթինեանցը դեռ մշտական խմբում չէր, այդպէս կարողացան անել, այժմ երբ մշտական խմբումն է և ուրեմն Ամատունուց կախումն ունի, իմացեք թէ ինչպէս կտրող են անել) և ներկայացման երկերի յանկարծ անհետացրին, ինչ և իցէ. եթէ գոնէ մի կէտ լինէր Տիշը Մատինեանցի յոգաւածում, ես ոչինչ չէի գրել, բայց քանի որ լրագրութեամբ այդպիսի անորէն անարգարութիւններ են երևում, այս գրաւածում լռելը չը կարծեմ թէ աշխարհիւն համարվի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

«Киевлянинъ» լրագրի պատճառ է հետևեալ անցքը, որ պատահեց Մատինեանցի Բայանի է որ Մատինեանցը ամբողջութեամբ են նրաների իրաւունքը մարտադրութեամբ բնակեցրել: Այդ պատճառով Մատինեանցը բոլոր նրանցը սկսեցին այլ և այլ անցակցիներ ձեռք բերել: Մի հրեայ աղջիկ, որ ներկայութիւն (տանուորութիւն) է սովորում, գիտեալով որ ստիպված կը լինի թողնել Մատինեանցը, ստիպվեալ աստ. բակաց տների կանանց տուժալ ձեռք բերել և միս կանանց հետ միասին ներկայանալ քաղաքային բժշկի ընտրութեանը: Արքան կարմրեց և բժշկը, կը օրտրոլին ընտրուց յետոյ, նա մողվեց որ դա բոլորովն չէր պատկանում այդ դատակարարի կանանց և ստիպված էր զրմել այդ միջոցին, միմիայն, որովհետեւ հրեան է և ուրիշ կերպ նրան չէին թույլ տայ Մատինեանցը արքան և իր ուսումը շարունակելու: Լրագիրը հարցնում է. այդքան այդ տեսակ կողորթիւններ չեն ապագոյցանում անհրաժեշտութիւնը վերջապէս թույլ տալու հրեաներին, միս հպատակների նման ազատ ապրելու պետութեան ամեն տեղի բում: Չը պէտք է մոռանալ որ «Киевлянинъ» յետագէմ լրագիրների թւին է պատկանում, բայց նա էլ չը կարողացաւ իր ձայնը չը բարձրացնել հրեաների իրաւունքի համար:

Գուրի 28-ին թիֆլիսի Բաղադրանայի մտաբերված մի տան մէջ, ժամը 8 տուստեան կը բակ յայտնվեցաւ: Տան մէջ գտնվում էր մի դեղատուն: Եւստով բոցըրը պատեցին ամբողջ տունը և փախեց էր պատնուած մտակայ տներին և Բաղադրանային: Այդ տեղից վաճառականները, որոնց մեծ մասի այցանքը ապանված չէ, սկսեցին դարձակել իրանց խոտութիւնը: Բաղադրանայէս հրաշք վարչութիւնը բողոքեալ տեղական բանտրների օգնութեամբ կարողացաւ առանձնացնել այդպիսի տներ և մտակայ շինութիւնները պահպանել կրակ ընկելուց: Մատինեանցը հրեաները փախեցաւ որ ես թիֆլիսի նեղ փողոցներում, որտեղ տները, չը նայելով փողոցների նեղ լինելուն, ամենքը փայտեայ բակօճներ ունեն: Ե՞րբ այդ շինութիւնները ձեռք վրա և մեր փողոցների անցակ նեղ լինելու վրա մեր քաղաքային վարչութիւնը կը դարձնի վերջապէս իր ուշադրութիւնը:

«Кавказский Курьеръ» լսել է որ վաճառական Պոպով, որի խնամքը թիֆլիսի Միլիտարայի մի քանի շարքի առաջ այրվեցաւ, վիսա կրեց մոտաւորապէս 23,000 ռուբլ գումար: Ես խնամքի մէջ հրեան էր ունէր այդ բանք 40,000 ռուբլ գումարի, իսկ այդ արքանքը ապահոված էր միայն 17,000 ռուբլու: Բացի ստանից գանազան դոկումենտներ և վեկիտներ, որոնք թէ և պահած էին երկամեայ արկի մէջ, նոյնպէս կարող են ոչնչացրած լինել: Արքան պարտի վիսայը աւելի էլ մեծ կարող է լինել:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Արասթուման, 25 յուլիսի

Այսօր ձեռքս ընկաւ «Մեղութիւն» մի համար (№ 135) որի մէջ կարդում եմ կարագեալ Մատինեանցի յոգաւածը: Չարմանալի բան. այն մարդը, որին ամենից լաւ յայտնի է, թէ որպիսի մեքենայութիւններ գործ դրվեցան, թէ ինչմէջ, որ հանգուցեալ լորն կերել թէ կը փափաքի կըր տեսնել ի փոքր Ասիայ:

Վերջիշեալ նկատողութեամբք փափաքեցաք ուրեմն տեսնել մի ընկերութիւն որ այս արուեստավարութեան վերայ դարձնէ նախ իւր ճիգերը: Եթէ, մտածեցիք, այդ ընկերութիւնն կըրթական նպատակաւ հաստատուած է, առ ես մի կրթութիւն տալ է սոցիալ և յառաջագոյն, վասն զի սոցիալ ինչ գիտի է, ինչպէս այս օրերս նորաձեւութիւն կաւ ասեր:

Հայաստանի անտեսական բարեօրման անհրաժեշտ լինին ասկաւն ոչ ոք ուրացաւ, նոյն իսկ Միացեալ ընկերութեանց երեսփոխանական ժողովին ամենէն աւելի որահայանողական անգամներն: Միայն թէ ոմանք այդ բարեօրման ուսման և գիտութեանց զարգացմանը կը կարծեն ձեռք բերել. «է» դարձեալ կասեն, ինչ հարկ կար այս առաջարկութիւնն մեր ընկերութեան բերել, մինչդեռ նորա նպատակն որոշ և սահմանափակ է: Կ'նշուի կարէ նա փոխել իւր նպատակն առանց իւր գործիւնն վտանգելու:

Այսքան տարիներէ ի վեր չբառանուութիւնն մեր գլխաւոր զբաղմունքներէն մին է: Երբ կը տեսնեմ որ մեր ստիկ իբրև բարեօրման օրինակ առաջարկեան տակաւին փոփոխումն կը թարգմանուի:

մանկն, կը կասկածիմք որ մի գուցէ մի մասնաւոր գիտաւորութիւն լինի մեր կարծիքն ինչպէս թիւրեւտ:

Ինչու Միացեալ ընկերութիւնքն ընտրեցինք և ոչ մի ուրիշ մարմին, որ ընդունի այս բարեփոխեալ ուղղութիւնն, իր բաւազոյն ազգին օգտին համար:

Իբրև ընկերութիւններն՝ դատ դատ հիմնուած ժամանակինն՝ Հայաստանի մանկուսն մտաւորական զարգացումն ունէին իրենանց միակ նպատակ: Այդ ուղղութեան ոչ ոք մի զիտողութիւն կարող էր անել, վասն զի սրբա երեքն եւ զըրրոցական եւ անդուն երիտասարդներէ հիմնուած լինելով բնականապէս ուրիշ լաւագոյն մի բան չէին կարող մտածել հայրենեաց օգտին համար: Բայց նուիրատուաց շատերուն խորհրդովն և ոմանց ճնշմանը կըր միացումն, կամ աւելի ճիշդ խօսելով հատուկութիւնն կատարեցաւ, հանգամանքներն նոյնն չը մնացին: Այդ մեծ ընկերութիւնն ժողովրդեան ուշադրութիւնն սկսաւ գրաւել, նորա հաստատութիւնն աւելի արմատացաւ, վարին աւելցաւ, յայտնութիւնն երաշխարարի թուեցաւ, վերջապէս փոխանակ մի մասնաւոր հիմնարկութիւն լինելու, եղաւ նա կատարելապէս ընդհանուր ազգին ընկերութիւնն, ամեն աստիճանի և

ամեն երկրի հայուն ընկերութիւնն: Աս թէ այլև իրեան նպատակ դրած էր Հայաստանի և Կիլիկիոյ մէջ ուսմանց ծաւալումն, սակայն ինչպէս կարող էր մնալ մի ստանաւափակ շրջանի մէջ և չը ծառայել հայ ժողովրդեան աւելի կենսական և աւելի ստիպողական պահանջներուն:

Միացեալ ընկերութիւնքն ամբողջ մի տարի կատարելապէս հետևեցան իրենանց նախորդներուն շաղկիւն: Մէկ տարուան մէջ այս ընկերութիւնն զգալի մի արդիւնք սպասել անհնարին էր, նա մասնաւոր որ վերացական մի արդիւնք զժողովրդին է ստուգել: Ասկայն միութեանէն վեց ամիս վերջն, ընկերութեան հասցիներն սկսան ասկաւառալ: Այն տեսնելն ընկերութիւնն պիտի պարտաւորէ իւր գործառնութեան շրջանն սեղմել, եթէ նախկին երեք ընկերութեանց իմացած ստակն չունենար իւր ծախուց զէմ գնելու համար և այսպէսով ապրել նոյն փախլով մինչև այս օրերս:

Ինչ էր սրա պատճառն Պատանեաց եւ անդին շեղումն, թէ հասարակութեան անտարբերութիւն: Մեր տեսաք թէ նուէրներն սկսել էին պակասել, և մտածեցինք թէ ժողովրդին, որու բնական ազգումն շատ անգամ առաւել ուղիղ է քան ամեն իւրին մտածութիւն, սկսել էր արդեօք զգալ թէ ուսմանքէ աւելի դրական մի

բան հարկաւոր է տալ նախ Հայաստանի ժողովրդեան Այս բնական պահանջն ընկերութեան նուազելուն իսկական պատճառն կը կարծիքս և սորա փրկութեանն համար զորսու որ մի գործ տալ ուղեցինք առաջարկելով ոչ թէ հիմնական մի փոփոխումն, այլ մի միջոցի բարեփոխումն, որ այժմ անհնաւատեան անձանց այնքան գոյթակողութիւն տալ կը լինի: Ար և է ընկերութիւն, որբան եւ անդուն և անշահաւոր անձեր և բաղկացած լինել, քանի որ ժողովրդեան հետ և նորա աջակցութեամբն պիտի գործէ, չէ կարող երկար առնել և քաջաւորով ապրել ինքն ժողովրդեան իրական պահանջանցն և պէտքեւ թուան իւր գործն չը համապատասխանէր: Երբ ասն գն լաւ բան է, բայց քան քայն առաւել տեղական և լաւ մի բան հարկաւոր է ամեն գործի մէջ, մեք ժողովրդեան անմիջական պէտքն տեսնական բարեօրմանն մէջ նշմարեցինք, և Միացեալ ընկերութեանց վայն զգացնել տալով ընկերութեան փրկել իւր ժողովրդականութիւնն և կրկին դարձունել իրեն իւր վաղեմի փայլն:

(Կը շարունակվի)

որ թատրոնական բանակուի վրա ոչ մի նամակ այլ ևս չենք տպի, բայց այս համարում դարձեալ մի նամակ ենք տպում, որ ստացանք Արաթ-Թուրքիայից, պ. Ասեփան Սահարաբեկցից: Այսուհետև ոչ մի նամակ էլ չենք տպի այդ խնդրի մասին:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Մեր նահանգի կալուածական խնդիրը վճռելու, կալուածատէրերի հողերը գնահատելու համար թիֆլիսից սպասած յանձնաժողովը մինչև այժմ չէ գալիս: Գլխավոր վարչութիւնը ինչպէս է տեսել մեր կալուածատէրերին որ այդ յանձնաժողովը կուշանայ, իսկ տեղիս նահանգապետին գրել է որ իր սեփական միջոցներով գնահատել տայ հողերը, որպէս զի նշտագիրն և շտապագիրն զիւղացիների ձեռքով կալուածական հողերի յետ գնելու գործը: Եւ ահա նահանգապետ վարչութիւնը նշանակել է երկու գնահատողներ, որոնք ոչ երկրի պահանջների հետ ծանօթ են, ոչ էլ առհասարակ կալուածական հարցի հետ: Մի և նոյն ժամանակ որպէս ներկայացուցիչներ կալուածատէրերի և գիւղացիների կողմից նշանակված են ոչ թէ ճշմարիտ կալուածատէրը և գիւղացին, այլ արքունի պաշտօնեաներ, մի կողմից, այսինքն կալուածատէրերի կողմից նշանակված է Ս. Աղամալեան, հաշտարար միջնորդը, որ կարծած է կառավարութիւնից, որովհետև նրանից սօժիթ է ստանում և ունի մի կալուածք որ իր արգելափակումով շատ շատ իրան և իր ընտանիքը կարող է չոր հացով կերակրելու մի տարվայ ընթացքում, միւս կողմից, այսինքն որպէս գիւղացիների ներկայացուցիչ, նշանակված է նահանգապետ վարչութեան մի պաշտօնեայ, պ. Խաչատուր: Իսկ այստեղի կալուածատէրերի չըջանում տիրում է կատարել ապագայ, անհոգութիւն կալուածական հարցի պաշտօն թէ այնպէս վճռվելուց նրանք կարող են մեծ վնասներ կրել, — և այդ միջոցների արժողութեան գործերը կառավարութեան առաջ պաշտպանելու համար, նրանք այդ բոլոր հարուստ կալուածատէրերը՝ հայերը և թիւրքերը, ընտրում են պ. Բարսեղ կղիպարեանցին որ համարվում է շատ խելօք մտղ, որովհետև կօպէկանոց ազգականութիւն է անում նահանգապետ գառարանում, մեծ մասամբ խելօք կերպով լուծում է հասարակութեան մէջ, զթի վրա սկիզբներ ունի դրած է մեղանից էլ աւելի չէ հասկանում կալուածական խնդիրը: Միջոցների արժողութեան գործերը պաշտպանելու համար արան են ընտրում, ուղղորդում են թիֆլիս և նրան տալիս են 400 ռուբլ ճանապարհածախս և թիֆլիսում գործերը վարելու համար:»

ՂԱՐԱՔԻՍԻՍԻՍԻՑ մեզ գրում են: «Ահա մեր Ղարաքիսիայի անտառապետի գործերից մինը: Ղաչաղան գիւղից մի քանի սայլապաններ, որի նաւոր տունակով խօսու անտառից փայտ էին բերում, Անտառապետը խլում է նրանց ձեռքից բիլետը և անպաշտպան գիւղացիների բարձած սայլերը կանգնած են մնում ճանապարհի վրա: Գիւղացիները երկու անգամ հեռագիր են ուղարկում նահանգապետին: Հետանքների մասին տեղեկութիւն չունեն:»

Չնար պիւղից որ կիսով չափ բնակեցրած է հայերով և վրացիներով, մեզ գրում են որ վրացի աւամիկները իրանց թոյլ են տալիս անպաշտպան ձեռք հայերին, հայտնի նրանց կրօնը և այլն: Երբ գիւղական դատարանում այդ մասին հայ գիւղացիները գանդատվում են, դատարանը և տանուտէրը, որ ինքն վրացի է, մեծ մասամբ արդարացնում են վրացիներին:

ՂԱՐԱՔԻՍԻՑ մեզ գրում են: «Ղարաքիսի ժողովուրդը ոչ թէ միայն ինքն իր զարդի մասին հոգ չէ տանում, այլ և հոգացողներին արգելում է: Անցնել ապրիլ ամսից սկսած աշակերտներից ոմանք խոտապան իւրաքանչիւրը ամսական 25 կօպէկ վճարել զարդի վարչութեանը ջրի և ծառայի փող: Եւ ինչ էք կարծում, ծնողները այդ խնամքով, սկսեցին զարդից զուրս բերել իրանց մանուկներին այդ 25 կօպէկը չը վճարելու համար: Գլխաւոր յետոյ ինչ կարելի է սպասել այդ տեսակ ժողովրդից: Գարդը անհնաւանդիմար դրութեան մէջ է:»

Խօսու գաւառի Ուզունլար գիւղից մեզ գրում են: «Մեր գիւղում, ուսումնարան չը կայ: Էջմիածինը տարեկան մի յայտնի գումար խօսու

եկեղեցական կալուածներից վայելում է, բայց գիւղերին միայն այն օգուտ է տալիս, որ անդադար քահանայ է ձեռնադրում տգէտ տիրացուներին: Ժողովուրդը կատարելապէս դուրի է բարոյական, կրօնական ուսումից և թիւ որ և է յանձնարներ չէ գործում, զրա պատճառով մի կողմից իշխանութեան առջև սարսափն է, իսկ միւս կողմից նախ յատուկ բնական բարոյական զգացմունքն է: Խօսու գործակաւոր հայր անտանել է զարձեկ ժողովրդին իր վարմունքով: Եւ կատարելապէս կողոպտում է և կենդանի մարդկանց և ննջեցեալներին:»

Ուզունլարից մեզ գրում են: «Խօսու գաւառին կից Ջամբաղչի շուէ ճանապարհի շինութեան համար մեր հասարակութիւնը վճարեց 2000 ռուբլ, տեղական պաշտօնավարների կարգադրութեամբ և հրամանով, թէ և հասարակութիւնը այդ ճանապարհից տարիների բնվաճաքում ոչինչ օգուտ չէ կարող ունենալ:»

Յայտնի է որ «Голосъ» լրագիրը գաղարկեցրած է կառավարութեան հրամանով մեզ ամսով Այժմ լուծւում ենք որ նրանք, որոնք գրված էին «Գոլոս» լրագրին ամբողջ տարով, կը տանան այդ լրագրի տեղ մի նոր լրագիր որ արդէն թոյլտուութիւն է ստացել հրատարակվելու պ. Մոզէսովի խմբագրութեամբ և որի վերնագիրը կը լինի «Новая Газета.»

Յաւելով յայտնում ենք որ թիֆլիսում հրատարակվող «Кавказский Курьеръ» լրագիրը ժամանակաւորապէս գաղարկում է հրատարակիչը:

ՄԻՂԱՆԻՑ մեզ գրում են: «Այս տարվան կանոնաւոր անձրևների պատճառով հողի բերքը շատ լատ է այստեղ: Միայն զինու սակաւութիւնը անկեր է, որովհետև կարկուտից ազատված խաղողի մեծ մասը մերթով է փասված: Այլիքի պղզը այժմ արժէ 1 ռ. 40 կ., պանիրը 8 ռ., խլը 18—20 ռուբլ, մսի ֆունտը 9 կօպէկ: Այս կողմերում և նոյն իսկ քաղաքում երեսուցի են կարկուտի և սկարլատին հիւանդութիւնները:»

ՄՈՉՂՈՎԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Թեմական առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոսը կենարով Մոզղովում մի քանի շարաթ, ոչինչ չը չինեց և եկեղեցիները իրար նրա պատճառով ծախեցին 250 ռուբլ: Իսկ մօտերս նա, այստեղ ոչինչ չը չինեցուց յետոյ, մեկնեցաւ Պրատիգորսկ հանգստանալու համար:»

«Южной Край» լրագիրը հաղորդում է որ Խարկովում գիտաւորութիւն կայ հիմնել մի բնութիւնագիտական երկրի քանադակը Արեւմտայի անունով, որով կօմանդակվի միշտ համալսարանի մի ուսանող լեզուագիտական բաժնի:

Մոզղովից մեզ հաղորդում են որ այդտեղ բուկալի է առաջին հարկատուութեան միջոցների էժանութիւնը: Յոյս կայ որ երկու, երեք ամսից յետոյ միջոցները աւելի էլ կէժանանան: Այժմ հայ ֆունտը ծախվում է 3 կօպէկով, մսի ֆունտը 5 կ., բրինձը 6 կ., մի սալ 3 ձմերուկ, որ կը պարունակէ իր մէջ 150—200 հատ, արժէ 2 ռուբլ: Մրգերն էլ էժան են:

Օգոստոսի 1-ից մինչև 15-ը թիֆլիսում միջոցները կը ծախվեն հետեւեալ դերով: Հացը ցորենի առաջին տեսակի, ֆունտը արժէ 5 1/2 կ., երկրորդ 4 կ., տեղական ձեռով թխած ցորենի հացը առաջին տեսակի 6 կ., երկրորդ 4 1/2 կ., ցորենի և կրակաշատկայի այլուրից խօտն թխած լաւոյն ամբողջ հացը առաջին տեսակի ֆունտը 7 կ., երկրորդ 5 1/2 կ., երրորդ 5 կ.: Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի արժէ 9 կ., երկրորդ 7 կ., սուկի 15 կ., ոչխարի մսի ֆունտը 9 կօպէկ:

Վերջին ժամանակները ամբողջ ուսուցչական մասը սկսել է ստանիկ հետադարձել: Բուսաստանի ազանդաւորների կենտրոն, որոնք շատ բազմաթիւ են Բուսաստանում, սկսել է հետագոտել նրանց վարդապետութիւնները խղճմաբար կերպով: Ազանդաւոր ամենաջերմ հետադարձող Պրուգալին գրող է, որ սպում էր յօդուածներ թէ «Голосъ» լրագրում և թէ «Русская Мысль» ամսագրում, որ հրատարակվում է Մոսկու վայում և համարվում է համալսարանի երիտասարդ պրոֆէսորների օրգան: Կաշխատներ ծանօթացնել հայ հասարակութեանը ուսու այլ և այլ ազանդների հետ:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Բարտելիմի - Վենտ - Նիբը, պատասխանելով դուքս Բրոյիի հարցին, ասաց մտաւորապէս հետեւեալը: «Կատարող իշխանութիւնը երբէք չէ ձգտել իրանցիկ պարբերական պատկանած իրաւունքը պատերազմ յայտնելու և իրազարու թիւն հաստատելու մտաւ: Մենք չենք պատերազմել Տունիսի բէյի հետ, այլ նրա հետ համաձայնվելով, ձեռքից սպասամբութիւնը գրեթէ առանց պատերազմի: Միջոցի ամբակնութիւնը անհրաժեշտ էր այնտեղ հանգստութիւն վերականգնելու համար. մենք պարտաւոր էինք այդ անկախարկ էր նախատեսել, որ մենք, ինչպէս օտարականներ, ընդգրկմաւորութեան կը հանգրիպէինք Տունիսի ազգաբնակիչներին կողմից: Բայց մենք թէ Տունիսի և թէ Արօրոյսի համար ամենալաւ կարգեր հաստատեցինք: Մենք ամբողջ տաս տարիներ արշաւանքների էինք համբարում մեր երկրի վրա, որոնց Տունիսի բէյը անկարող էր արգելել: Տունիսի կառավարութեան մէջ մեր դէմ թշնամական ուղղութիւն սկսեցաւ, որի պատճառները ևս չեմ քննի: Մենք պէտք է այդ բանին վերջ դնէինք և Տունիսի կառավարութեանը մեզ բարեկամ դարձնէինք: Մայիսի 12-ին ստուրագրված դաշնագիրը ցանկալի էր Տունիսի բէյի համար և նրա մէջ ոչինչ նոր բան չը կայ: Տունիսի արշաւանքը անհրաժեշտ էր և պետ Բերլինի կողմերի ժամանակ նա չափազանց բնական էր համարվում: Բայց կրկնում եմ, որ մենք չենք ցանկանում երկիրներ նուաճել և, եթէ մենք Տունիսի մէջ գրաւել ենք մի քանի կէտեր, այդ բանն էլ արել ենք կարգապահութիւնը վերականգնելու համար: Մայիսի 12-ի դաշնագիրը արդէն տուեց իր պտուղները, բէյը դէպի մեզ այժմ հաւատարմութեամբ է վերաբերվում: Տրիպոլիսի հարցի վերաբերութեամբ, որ յրազմեցիք անտեղի բարձրացրին, ևս աշխատեցի հանգստացնել Անգլիային վերջնական յայտնութեամբ, որ Տրիպոլիսը Ֆրանսիայի հետ միացնելու մտքը մի անպաւոյ կերպ է, և գրանից տեղի անցիլալցիներին ոչինչ չեմ կարող ստել: Ինչ կը վերաբերի Բ. Գրան գերիշխանութեանը Տունիսի վրա, պէտք է յայտնեմ, որ Ֆրանսիան երբէք չէ ձանաչել այդ գերիշխանութիւնը: Ինչպէս Բ. Գրանը մեր յայտնութիւնները այդ առարկայի մասին բարեկամաբար ընդգունեց և աշխատում էր արգելներ չը դնել մեր գործողութիւններին Տունիսի մէջ: Ազգասիրութեան պահպանութեան մէջ մեզ ոչ ոք չէ կարող նախատել: Այսպէս թէ այնպէս Տունիսի մէջ կատարած գործը կը ծառայի մեր ազգահովութեանը և երկրին պատիւ կը բերէ:»

Բրոյիի հեղինակն նկատեց, որ նա բաւական է մինիստրի մեկնութիւններից: Արովհետև շատով լինելու են նոր պատճառները ընտրութիւնները և Գամբետայի նախագահական ժամանակամիջոցը լրանում է, նա դուրս է գնում Բուրբոնեան պալատից, որի մէջ պատգամաւորների ժողովի նախագահ է սպրում: Գամբետայի իրեն մասնաւոր մարդ անցնում է իր հին բնակարանը:

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայից հաղորդում են որ Գարֆիլդը նախագահի առողջութիւնը հետզհետէ բարւարւում է:

«Մատիս» մէջ կարգում ենք հետեւեալը: «Ս. պատրիարքը Բաւոյի գիւղերու հայ և թիւրք հողագործաց և պէշեու միջև ծագած հիւսուորաց կալուածական խնդրոյն վրա վերջին օրերս թաղիր մը մտաւոյցով լինելով: Բ. Գրանը Քարբիլի կառավարութեան ուղղեալ հրահանագիր մը ստու. յանձնարարելով որ պատրիարքարանի գանդատանայ նիւթ կողպ այս խնդիրը քննել և արդիւնքը տեղեկագրել: Քարբիլի կառավարութիւնը շատերը կը հոչակին, մեծ ծառայութիւն պիտի բնէ բարոյցի հայ և թիւրք հասարակութեան, եթէ հողագործ ժողովրդեան արդար իրաւունքն անապառնկեամբ պաշտպանել, առանց բնաւ սկսածելու պէշեան ազդեցութեան:»

«Մատիս» լսել է որ հայոց և չէրնօգորիական խնդիրների վերաբերութեամբ տարածայնութիւն է ծագել Կ. Պոլսի անգլիական և ուսու դեպարտմերի մէջ: Առաջինը պնդում է որ հայոց խնդիրը այժմ պէտք է քննվի, իսկ ուսուց դեպարտը կարծում է որ հայոց խնդրին հերթը դեռ չէ հասել, քանի որ Չէրնօգորիայի խնդիրը վճռված չէ:

Իշխան Բիսմարկ խմբագրել է սուլիս առեւարական դաշնագրութեան մի ծրագիր Թիւրքիայի հետ, որ երկու տերութիւններին էլ շահակտ պէտք է լինի:

Ֆրանսիական «Debats» լրագրին արգելված է Թիւրքիայի օսանմանների մէջ մուտքը:

«Stamboul» լրագիրը հաղորդում է որ այս օրերս լոյր Կիւֆրբին մի տեսակցութիւն ունեցաւ: Ասի-Փաշայի և Գարեանի հարեթիւն է Ֆէլդիի հետ, որոնց հետ երկար խօսակցից Հաստանի բարեօրոգումների խնդրի վրա:

Տօրնոսն, որ նշանակվեցաւ անգլիական դեսպան Ս. Պետերբուրգում, չուսով ուղևորվելու է Անգլիայից դէպի Բուսաստան:

Վարնայից հեռագրում են որ Բոլգարիայի իշխանը թոյլ տուեց մի քանի հրէայ ընտանիքներին, որոնք գաղթած են Բուսաստանից, որ նախկին Բոլգարիայում:

Հեռագիրները հաղորդում են որ Կամբետայն գնում է Տօր քաղաքը ընտրողական շարժման վրա անձնական ներգործութիւն ունենալու համար:

«Нордоск» լրագիրը հաղորդում է որ գերմանական ազատամիտ կուսակցութիւնը ամեն ջանք է անում կրկին մտնելու կղերական կուսակցութեանը, վերջ տալ կաթոլիկութեան դէմ հարձանքներին և ձեռք ձեռքի տուած կենտրոնի կուսակցութեան հետ միացած ոչմերով գործել իշխան Բիսմարկի բնաւոր գիտաւորութիւնների գէմ: Հետագրով հաղորդում են որ մայիսեան օրէնքների Կերմանիայում վերաբնութեան կենթարկվին:

Աստրիայի կայսրը չուսով մի տեսակցութիւն կուսակցութեանը Վալախիայի թագաւորի հետ, Միւնիխէն քաղաքում:

Անցիլիան արմատական կուսակցութեան ներկայացուցիչ Բրեզզո, պիւն չեն թոյլ տալիս իր տեղը բռնել համայնքների ժողովում, այս օրերս նորից փորձել մտնել պարբերական և նրատեղ իր տեղի վրա, որպէս ազգի պատգամաւոր: Բայց պարբերական մուտքի մէջ նրան կանգնեցրեց մի ստափան Կէնինց ազգաւանում և չը թոյլ տուեց նրան մտնել պարբերական: Այն ժամանակ Բրեզզո զիմնց գառարանին և զանպատ ներկայացրեց Կենինցի դէմ Կործր կը քննվի այս օրերս:

ՄՇՈՎԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԵՒԱՑԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի:	Պետական
բանկի 5%	տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ., 87 կ. երկրորդ 94 ռ. 75 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 92 ռ. 25 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տուժակը արժէ 224 ռ. 75., երկրորդ 223 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 50 կ., երկրորդ 91 ռ. 50 կ., երրորդ 91 ռ. 50 կ., սակի 7 ռ. 80 կ.: Բուսուց 1 ռուբլ 1 օնգրոնի վրա արժէ 25,71 պէնս, ուսուց 100 ռ. Համբարդի վրա արժէ 219 մօրկ 25 պֆ.: Փարիզի վրա արժէ 270 ֆրանկ 25 սանտիմ: Բօրսայի արամագրութիւնը ամբար է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՐ ԱՐԵՐՈՒՆԻ